

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

25 08 2016թ. թիվ 94 նիստում



ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ**

1. Սույն կարգով սահմանվում է օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիների ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություններում (ՀՀ ԳԱԱ) և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում (ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) ընդունելության կարգը և պայմանները:
2. Օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիների ընդունելությունը կատարվում է ՀՀ կառավարության 28.04.2011թ. թիվ 700-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև օտարերկրյա պետություններում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում աշխատող դիվանագետների ընտանիքների անդամների ընդունելության» կարգի համաձայն:
3. Օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիները կարող են դիմել ՀՀ ԳԱԱ և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ նաև ընդհանուր հիմունքներով՝ դիմորդի փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից փորձաքննությունից հետո՝ փաստաթղթում առկա տեղեկատվության իսկության ստուգումից և հյուպատոսական վավերացման առկայությունը ճշտելու նպատակով:
4. Դիմորդների փաստաթղթերի հաշվառումը և փորձաքննությունը կատարվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:
5. Սույն կարգով մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կարող են դիմել այն օտարերկրյա և սփյուռքահայ քաղաքացիները, ովքեր ստացել են Հայաստանի Հանրապետության առնվազն բակալավրի,

